Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջը 2026-2027 ուստարում կատարում է ընդունելություն հետևյալ մասնագիտություններով.

	Կրթության ձևը	Կրթության հիմքը	Ընդունելության տեղերի թիվը			Ուսման տևողությունը	Որակավորումը
			Անվճար	Վճարովի			
					Չափը		
Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ	Առկա	9-ամյա			150 000	4 տարի	Գործավար
Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	Առկա	9-ամյա			150 000	4 տարի	Տեխնիկ-ծրագրավորող
Հաշվապահական հաշվառում	Առկա	9-ամյա			120 000	3 տարի	Հաշվապահ
Նախադպրոցական կրթություն	Առկա	9-ամյա			120 000	3 տարի	Դաստիարակ՝ նախադպրոցական կրթության
Էլեկտրական կայաններ, ցանցեր և համակարգեր	Առկա	9-ամյա			120 000	3,6 տարի	Տեխնիկ՝ էլեկտրական կայանների, ցանցերի և համակարգերի շահագործման և տեխնիկական սպասարկման
Ապահովագրական գործ	Առկա	9-ամյա			150 000	3 տարի	Գործակալ՝ ապահովագրական գործի
Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն	Առկա	9-ամյա			150 000	3,5 տարի	Փորձագետ՝ պարենային ապրանքների որակի փորձաքննության

Դիմորդը՝ https://dimord.emis.am/ կայքում էլեկտրոնային եղանակով լրացնում է դիմում հայտը, որն իր մեջ ներառում է

1. անձնական տվյալները (անուն ազգանուն հայրանուն, ծննդյան օր ամիս տարեթիվ, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար),

2. հանրային ծառայության համարանիշը կամ օրենքով սահմանված կարգով դրանից հրաժարվելու մասին տեղեկանքի համարը

Դիմորդը https://dimord.emis.am/ կայքում ներբեռնելու է նաև

1) լուսանկար,

2) կրթության մասին փաստաթղթի (դիպլոմի դեպքում նաև ներդիրի) պատճենը,

3) անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր, կամ ծննդյան վկայական՝ մինչև 16 տարեկան դիմորդի համար, կամ զինվորական գրքույկ, կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական),

4) կցագրման վկայականի պատճենը (զորակոչային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զինհաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշումի կամ չզորակոչվելու պատճառը հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետում ունեցողներից՝ Հանրապետական զորակոչային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),

5) ընդունելության արտոնության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում),

6) իր ընտրած մասնագիտության համար պահանջվածից ավելի բարձր կրթության ավարտական փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում), ինչպես նաև այդ մասնագիտությանը համապատասխան՝ վարպետային ուսուցման որակավորման կամ կարճաժամկետ դասընթացի վկայականի պատճենը (առկայության դեպքում),

7) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաների, փառատոների) դիպլոմների պատճենները (առկայության դեպքում),

8) պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար տվյալ տարվա, ինչպես նաև նախորդ տարվա հանձնած ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ փաստաթուղթի պատճենը (առկայության դեպքում),

9) աշխատանքի վայրից տեղեկանքի պատճենը (առկայության դեպքում),

10) Դիմում հայտ ներկայացրած ուսումնական հաստատության հաշվեհամարին փոխանցած գումարի անդորրագրի պատճենը:

Ներկայացված կեղծ տեղեկատվության համար դիմորդը ենթակա է օրենքով սահմանված կարգով պատասխանատվության:

Դիմորդը կարող է դիմել մեկ ուսումնական հաստատություն մեկ մասնագիտության հայտագրմամբ՝ անվճար և վճարովի ուսուցման հիմունքով:

Հաստատությունում ընդունելությունը իրականացվում է առանց ընդունելության քննությունների:

Ընդունելության մրցույթը անցկացվում է լիազորված մարմնի կողմից՝ ըստ մասնագիտությունների հատկացված անվճար և վճարովի ուսուցման տեղերում հետևյալ սկզբունքով.

- անվճար ուսուցման տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների /այդ թվում քննական/, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության համար սույն կարգի ցանկով ընդունելության մրցութային առարկաների գնահատականների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը

- **մրցութային հավասար միավոր ունենալու դեպքում առավելությունը տրվում է .**

-մեդալակիր- դիմորդին

-տվյալ մասնագիտությամբ առավել երկարատև մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող դիմորդին

-պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար քննություններից առավել բարձր գնահատականներ ունեցող դիմորդին

-տվյալ մասնագիտության գծով բարձր կամ մասնագիտական կրթություն ստացած դիմորդին

Դիմորդը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելության գործընթացի կազմակերպման և անցկացման համար, ՎՊՀ հաշվեհամարին (16036107814200) վճարում է 1000 (հազար) ՀՀ դրամ:

Վճարովի ուսուցման տեղերը համալրվում են անվճար ուսուցման տեղերը համալրվելուց հետո:

Դիմորդի փաստաթղթերը ընդունվում են հուլիսի 24-ից մինչև օգոստոսի 17-ը, ժամը 18:00:

Անվճար և վճարովի ուսուցման տեղեում մրցույթը իրականացվելու է օգոստոսի 18-ին:

Մրցույթի արդյունքները կհրապարակվեն օգոստոսի 17-ին:

Մասնագիտություն	**Ընդունելության մրցութային առարկաներ**		
Գործավարություն՝օտար լեզվի խորացված իմացությամբ	1	2	3
	Օլ	Հլգ	Հպ
Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	Մ	Ֆ	Հլգ
Հաշվապահական հաշվառում	Մ	Հլգ	Օլ
Նախադպրոցական կրթություն	Հլգ	Մ	Հպ
Էլեկտրական, կայաններ, ցանցեր և համակարգեր	Մ	Ֆ	Հլգ
Ապահովագրական գործ	Մ	Հլգ	Օլ
Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն	Ք	Հլգ	Մ

Օգտագործված հապավումներ.

Հլգ- Հայոց լեզու և գրականություն
ՕԼ- Օտար լեզու
Մ – Մաթեմատիկա
Ֆ- ֆիզիկա
Հպ- Հայոց պատմություն
Ք- Քիմիա

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 077-94-63-87, 094-42-51-92 հեռախոսահամարներով: